**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

<<Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կեցության և սննդի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄԻԿ-ԳՀԾՁԲ-18/22 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 22-ին կնքված N ԵՄԻԿ-ԳՀԾՁԲ-18/22 պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Ծրագիրը սահմանված ժամկետում իրականացնելու անհնարինության պատճառով կատարվել է ժամկետի փոփոխություն :

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է և պայմանագրի կողմի հետ կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում Ծրագիրը սահմանված ժամկետում իրականացնելու անհնարինության պատճառով կատարվել է ժամկետի փոփոխություն:

Պատվիրատու՝ ***<<Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ***

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ «ԵՄԿ-ԳՀԾՁԲ-18/22», ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Երևան 27.11.2018թ

«Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժ/պ Ռոզա Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռաիսա Վարդանովայի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հիմք ընդունելով ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի «26» նոյեմբերի 2018թ-ի N 176-Ա/1 հրամանը, կողմերը որոշեցին՝ կատարել Պայմանագրի 1-ին հավելվածով՝ *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*-ով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխություն՝ «նոյեմբերի 25-ին», «նոյեմբերի 26-ին», «նոյեմբերի 27-ին», «նոյեմբերի 28-ին» բառերը համապատասխանաբար փոխարինելով «դեկտեմբերի 2-ին», «դեկտեմբերի 3-ին», «դեկտեմբերի 4-ին» և «դեկտեմբերի 5-ին» բառերով:

### 2. Այլ պայմաններ

1. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մաս: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կնքման պահից:

2. Համաձյանագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ | «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Աբովյան 9 | ՀՀ ք. Երևան, Դ. Դեմիրճյանի 36/8 |
| ՀՎՀՀ-02604737 | ՀՎՀՀ-02671392 |
| Արարատ բանկ ՓԲԸ | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 1510017358860100 | Հ/Հ 1570027857540200 |
| Տնօրենի ժ/պ՝ Ռ. Հակոբյան | Տնօրեն՝ Ռ. Վարդանովա |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |